ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԱԲՅԱՆԻ՝ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գործուղված անձը

   Աստղիկ Մարաբյան

2. Զբաղեցրած պաշտոնը

   ՀՀ ԿԳՄՄՆ մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

   Լյուքսեմբուրգի դքսություն, ք. Լյուքսեմբուրգ, մայիսի 4-6, 2022 թ.

4. Հրավիրող կողմը

   Մշակութային ուղիների եվրոպական ինստիտուտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

   - *Եվրոպայի խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի 2022 թ. հանդիպմանը մասնակցություն*

6. Քննարկված թեմաները.

   - *Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիների 2021-2022 թթ. շրջափուլի նոր հայտերի հավաստագրում, ընթացիկ ծրագրերի վերագնահատում,*
   - *Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի աշխատակարգի փոփոխության հաստատում,*
   - *Ընդլայնված մասնակի համաձայնագրի 9-րդ տարեկան խորհրդակցական համաժողովի ընթացիկ աշխատանքներ:*

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

   - *2022 թ. մայիսի 5-6-ը տեղի ունեցավ Եվրոպայի խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի տարեկան նիստը, որի շրջանակում ներկայացվեցին 7 նոր «Մշակութային ուղիների» հայտեր, որոնցից 3-ը ստացան «Եվրոպայի խորհրդի մշակութային ուղու» հավաստագիր: Հաջորդիվ տեղի ունեցավ առկա 12 «Մշակութային ուղիների» ընթացիկ, ինչպես նաև 2 «Մշակութային ուղիների» արտակարգ կարգավիճակի վերագնահատումը:*

- *Երկօրյա հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև 9-րդ փարեկան խորհրդակցական համաժողովի թեմատիկ և կազմակերպչական ուղղվածությունները, ինչպես նաև կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացվեցին Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի աշխատակարգի և Նախարարների խորհրդի CM/Res (2013) բանաձևի փոփոխության առաջարկները:*
- *2021 թ. Մշակութային ուղիների եվրոպական ինստիտուտի հետ համատեղ Հայաստանը հանդես էր եկել Հայաստանի մշակութային ուղիների քարտեզագրման նախաձեռնությամբ, որի ընթացիկ արդյունքների վերաբերյալ հանդես եմ եկել ելույթով՝ ներկայացնելով Հայաստանի մշակութային ներուժը, Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիների համատեքստում ներգրավվածության հեռանկարները և համագործակցության հնարավորությունները:*

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- *Եվրոպայի խորհրդի մշակութային 3 նոր ուղիների հավաստագրում,*
- *Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի աշխատակարգի փոփոխության հաստատում,*
- *Որոշվեց Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի հաջորդ նիստը կազմակերպել 2023 թ. ապրիլի 27-28-ը Լյուքսեմբուրգում*
- *Կառավարման խորհրդի անդամ երկրների ներկայացուցիչների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել ծրագրի շրջանակում փորձի փոխանակման ընդլայնման և համագործակցության հեռանկարների վերաբերյալ:*

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- *«Հայաստանի մշակութային ուղիների քարտեզագրում» փաստաթղթի հաստատում և հրապարակում:*
- *Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիներ ծրագրի շրջանակում Հայաստանի ներգրավվածության ընդլայնում,*
- *Անդամ երկրների հետ համատեղ ծրագրերի իրականացում:*

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մայիսի 10, 2022

Աստղիկ Մարաբյան